



“ԹՈՂ ՏՈՒՔԻ ՄԱՆԻ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՏԻ ԳԱՆ” ԳՈՒԿ. ԺԸ. 16.

ՀԱՏՈՐ Զ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ. ՄԱՅԻՍ 1. 1877.

ԹԻՒ 5.



ՅՈՒՆ ՏՂՈՅ ՄԸ

‘ԶԿՐՑԱՅ ԱՏԱԿ ՇԱՀԻՎ’

Ժամանակաւ Սամուէլ անուն տղայ մը երկուշարթի առաւօտ կանուխ ելլելով սկսաւ լրագիր ծախել :

Երթալով օդը տաքցաւ , և Սամուէլ շատ յոգնած էր , ուստի , «Լրագիր , Նորագիր և Մանգումէ” կանչելով փոխանակ փողոցները պատելու , գնաց անկեան մը գլուխը պատին կրթնելով կեցաւ , և փողոցէն անցնողները կը դիտէր , ինչպէս կը տեսնուի վերի

պատկերին մէջ : Սամուէլ այսպէս անցորդներուն նայելով մուցաւ լրագիր ծախելը , և երբ երեկոյ եղաւ , կ’ըսէր մտքէն . “Զկրցայ ստակ շահիլ” : Սակայն չէր գիտեր թէ ինչ էր ստակ չշահելուն պատճառը : Բայց ես գիտեմ : Սամուէլ չաչխատելուն համար ստակ չշահեցաւ : Ծոյլ մարդիկ միշտ նեղութեան մէջ կ’իյնան , վասնզի ստակն ինքնին չի գար մտնել մարդոց քսակները :

ՓԵՂՐՈՑ ԻՎԱՆՈՎԻԶ

Կ Ա Մ

ՍԻՊԵՐԻԱ ԱՔՍՈՐԵԱԼ ՄԸ

(Աւեր-բերի 3 Բողոք շք. և քրէ)

Այս կողմի բարեսէր գիւղացիք ոչ միայն հաց և օրիշ ուտելիք , այլ և հին կտաւէ սաւաններ տուին փեղրոյի և իվանի : փեղրոյ գիշերներն այն սաւաններուն փաթթուելով կը պառկէր , բայց այնչափ նեղութիւն կրած և յոգնած էր որ , երբ հօրը հետ լաստը նստելով ճամբայ ելաւ , անզոյց ինկաւ իբրեւ նուազեալ : Իվան զփեղրոյ այսպէս կիսամեռ տեսնելով շատ ցաւեցաւ և վհատեցաւ , բայց խորհելով տղուն այն մեծ անձնորացու թիւնը կը մխիթարուէր , և միտքը դրաւ զանի փրովկիաֆոցոյ տանել :

Քանի մը օրէն իվանի լաստը հասարամա գետը : Այս գետին հոսանքը սաստիկ է , և քիչ մնաց որ ալիքներն ընկղմէին լաստը : փեղրոյ պառկած էր անզոյց , և վերջապէս , “ փեղրոյ , փեղրոյ , միշտ օգնէ հօրդ ” ըսելով հողին աւանդեց : Իվան խորհեցաւ գիւղը հասնելէն ետքը տղուն մօր մինը Միքայիլ քահանային ձեռքով թաղել տալ , և ինքզինք իբր փախտական յանձնել կառավարութեան ձեռքը նորէն Սիպերիա զրկուելու համար :

Յուլիս ամսոյ մէջ գեղեցիկ օր մը փրովկիաֆոցոյ գիւղին բնակիչները տեսան հեռուէն լաստ մը որ կու գար գէպ իրենց գիւղը : Գիւղացիք լաստին վրայ ձերունի իվանը տեսնելով շատ ուրախացան , բայց երբ փոքրիկ փեղրոն շնչասպառ տեսան , անոնց ուրախութիւնը տրտմութեան փոխուեցաւ : Վաղելով գացին խմայնել

Միքայէլ քահանային որ փութաց գիտաօրել իր վաղեմի բարեկամը :

Գիւղացիք փեղրոյի մարմինն առնելով եկեղեցի տարին , և մինչդեռ զանգակները կը հնչէին , և ժամերգութիւնը սկսած էր , Միքայէլ քահանան զիվան առնելով տարաւ հոս բողբի Տովն , այսինքն գիւղին տիկնոջը տունը , անոր պատմեց փեղրոյի և իվանի արկածները :

Չիվան աքսորել տուող իշխանը մեռած էր , և փրովիլաֆսոյ ու մերձակայ գիւղերը ժառանգութիւն ինկած էին անոր որդւոյն հարսին Մարիա իվանովնայի :

Այս աղետաբարոյ և գթած տիկնոջ կառավարութիւնը շատ տարբեր էր հանգուցեալ իշխանին կառավարութենէն :


Փոխանակ հոգաբարձուի ձեռքով կառավարելու երկրագործները , ինք կառավարելու սկսաւ , լաւ գիտնալով որ հոգաբարձուք գրեթէ միշտ կը կեղեքեն և կը նեղեն աղքատ գիւղացիները : Տիկնոջը նաև գայրոցներ բացաւ , հիւանդանոցներ հաստատեց , և այնպէս ամենուն սիրան իրեն գրաւած էր : Գիւղացիք որչափ աժգոհ էին հանգուցեալ իշխանէն , նոյնչափ գոհ էին այս տիկնոջէն , և կը սիրէին զանի :

Մարիա իվանովնա Միքայէլ քահանայէն լսելով իվանի պատմութիւնը , փեղրոյի մարմինը հանդէսով բերել տուաւ իր տունը , և հոն զանի գեղեցիկ դագաղի մը մէջ դնել տալէն ետքը , դարձեալ հանդէսով եկեղեցի զրկեց և հոն թաղել տուաւ : Եւ մարմարեան խաչ մը կանդնել տալով անոր գերեզմանին քով , անոր վրայ գրել տուաւ այս պատմութեան գլուխը դրուած խօսքը , որպէս զի գիւղին բոլոր աղայք իրենց ծնողքը պատուելու և յարգելու նկատմամբ Սուրբ գիրքին խօսքը միշտ յիշէին :

ՀԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ ԲԱՆ ՄԸ

Վերի պատկերը կը ցուցնէ Անգղիոյ միւսէսնին մէջ գտնուած հետաքրքրական բաներէն մին : Եթէ ձեզի չըսուի թէ ինչ է վերի պատկերին մէջ ցուցուած բանը , չեմ կարծեր թէ պիտի կարենաք գիտնալ :

Պատկերին մէջ տեսնուած բանը թրածկան մը թուրն է , որ նաև մը կողք միտած գտնուած է : Չարմանալի է որ թրածկան մը թուրը նաև մը կողք միտուի և հոն մնայ , կ'երեւի



թէ թրածկը նաև կէտ կարծելով իր թուրն անոր կողք միտած է : Թուրը նաև ունի դուրսի պղնձէ տախտակէն , անոր ետևի տախտակամածէն և ներսի տախտակամածէն ալ անցած է , և ձուկը չկրնայով հանել զայն՝ թողած է հոն : Վերի պատկերին մէջ նաև ունի տախտակները դեռ կը տեսնուին թուրին վրայ :

ԱՆԳՂՈՅ ԹԱՒՈՒՀՈՅՆ

ԱՌԱՋԻՆ ԺՈՂՈՎՐ

1837 յունիս 20ին առաւօտուն կանուխ քէնդըրպրի արքեպիսկոպոսը քէնսինկիմանի պալատը եկաւ Ուիլիամ թագաւորին մահուամբ վիքդորիա իշխանուհոյն Անգղիոյ թագին ժառանգ ըլլալը նոյն իշխանուհոյն ծանուցանելու : Այս ծանուցման վրայ իսկոյն ժողով դումարուեցաւ : Մանուկ թագուհին ամառուան զգեստով եկաւ ժողովոյ սենեակն ուր Անգղիոյ նշանաւոր և իմաստուն անձինքներէն ոմանք երկայն սեղանի մը բոլորափքը նստած էին , ոմանք ալ ոտքի վրայ կայնած էին : Թագուհին ամենայն պարկեշտութեամբ և ծանրութեամբ դնաց նստաւ իրեն համար յատկացեալ աթոռին վրայ :

Ժողովոյն մէջ թագուհին աղուկերպով կարգաց ճառը զոր ուղղած էր ազգին : Յետոյ ժողովականք ոտք ելան թագուհոյն անձին և դահին հաւատարմութեան երդում ընելու : Նախ թագուհոյն երկու հօրեղբարքն անոր առջեւ խոնարհելով ձեռքը համբուրեցին : Թագուհին խանդակաթ և շորհալից կերպով նայեցաւ անոնց , և երկուքն ալ համբուրեց : Եւ Սըսէքսի դքսին որ տկար էր՝ քիչ մը օգնելու համար դահէն ելլելով քիչ մը յառաջ դնաց : Ժողովոյն անհագապիրը թագուհոյն վարմունքն

այս ժողովոյն մէջ նկարագրելով , « Ժողովոյն ներկայ գտնուող բոլոր անձինք , » կ'ըսէ , « լիաբերան կը դուրսին թահուհոյն վարմունքը : Թագուհին այնպիսի ազնուութեամբ , իմաստութեամբ և խոհմտութեամբ վարուեցաւ , որ կը կարծուէր թէ բոլոր կենացը մէջ վարժուած էր այսպիսի ժողովներու նախագահելու : »

Կը պատմուի թէ նոյն օրը թագուհին մօրը քով երթալով ըսաւ . « Մայր , դժուարաւ կը հաւատամ թէ Անգղիոյ թագուհի եղայ : »

« Միրելիս , » պատասխանեց մայրը , « քիչ մը առաջ ժողովոյ սենեակն մէջ կատարուած հանդէսը բաւական է քեզ վստահ ընելու : »

« Կամաց կամաց կը վարժիմ այս վիճակին , » ըսաւ թագուհին . « բայց որովհետեւ ստուգիւ այսպէս է , և դուք քու փոքրիկ աղջիկդ այս մեծ երկրին թագուհի կը տեսնես , հաճէ ընդունիլ սա ինդիրս . զիս երկու ժամ առանձին թող այս սենեակն մէջ : » Թագուհոյն մայրն իսկոյն դուրս ելաւ սենեակէն , և թագուհին առանձին աղօթեց :

ՏՂՈՒ ՄԸ ՄԻՋՈՅՈՒ ԲԱՄԻՔ

Կիրակնօրեայ դպրոցի մը տեսուչը օր մը աշակերտաց ըսաւ . « Տղաք , կը ինդրեմ որ ձեռն իւրաքանչիւր ոք այս կիրակի նոր աշակերտ մը բերէ : » Աշակերտներէն ոմանք իրենց մտքէն կ'ըսէին , « Մենք նոր աշակերտ չենք կրնար բերել : »

Ոմանք ալ կ'ըսէին . « Չանանք , թերեւս կրնանք նոր աշակերտներ բերել : » Այս վերջիններէն մէկը տուն երթալով ըսաւ իր հօրը . « Հայր , կ'ուզեմ ինձի հետ կիրակնօրեայ դպրոցը երթալ : »

Հայրն ամնալով ըսաւ . « Տղաս , ես կարդալ չեմ գիտեր : »

Տղան քաղցրութեամբ և յարգանք ըսաւ հօրը . « Հայր , մեր վարժապետները կարդալ կը սորվեցնեն քեզի : » Հայրը դնաց կիրակնօրեայ դպրոցը , հոն կարդալ սորվեցաւ , և Սուրբ գիրք կարդալով փոխեց իր վարքը , և գրավաճառ եղաւ : Յետոյ այս մարդուն ջանքովը շուրջ հարիւր կիրակնօրեայ դպրոց բացուեցաւ , և իբր երեսու հարիւր աղայք աշակերտեցան այն դպրոցները :

Ասկէ կը տեսնուի թէ տղու մը ջանքն անդամ ո՛րչափ բարիք կրնայ յառաջ բերել : Այս տղուն ջանքը

նմանեցաւ առուի մը որ հետզհետէ մեծնալով գետակ և ապա մեծ գետ կ'ըլլայ: Վերոյիշեալ տղան Աստուծոյ շնորհքովն իր հօրը փրկութեանը պատճառ եղաւ, հայրն ալ փրկուելէն ետքը երեսուն և հինգ հաւր տղաք բերաւ կիրակնօրեայ դպրոցները:

Մարդ մը կրնայ ձի մը աղբիւր տանիլ, բայց քսան մարդ չեն կրնար անոր ջուր խմցնել:

ԽՈՐԱՄԱՆԿ ԱՂՈՒԷՍ

Մարթա շատ հաւեր ունէր, և զգուշութեամբ կը պահէր զանոնք: Չգիտեմ ինչպէս, խորամանկ աղուէս մը այս հաւերուն տեղը սորվեցաւ, և ինչպէս կ'երեւի, գիշեր մը, մինչ բուր մարդիկ քուն էին, գալով մտաւ հաւնոցը:

Մարդոց պէս աղուէսներն ալ շատ կ'ախորժին հաւու, մանաւանդ վառեկի մէջ: Այս անասունը հաւու միս ուտելու համար երբեմն շատ հեռաւոր տեղեր կ'երթայ: Մարթայի խոհարար կրնն այն օրը կանուխ ելլելով խոհանոցին կրակը վարելէն ետքը հաւերը դուրս հանելու համար գնաց հաւնոցին դուռը բացաւ, և գիտե՞ք ինչ տեսաւ: Ո՛հ, ցաւալի՜ տեսարան մը. բոլոր հաւերն արեան մէջ թափխուած էին:

Հաւին մէկը հոս, միւսը հոն, ոմանք ալ ուրիշ կողմ մը անշունչ կը պառկէին: Երկայն չընեմ, հաւնոցին մէջ ուրիշ բան չէր տեսնուեր բայց մեռած հաւեր և աղուէս մը որ մեռելի պէս ինկած էր անոնց մէջտեղ: Խոհարար կրնն աղուէսը մեռած կարծելով անօրքով գնաց, այնպէս խոժոռ և զայրազին գէն գէն քով նայեցաւ անոր որ, եթէ ո՞վ ըլլար, կտոր կտոր պիտի ընէր զանի: Աղէկ մը նայելէն ետքը աղուէսին, ոտքովը մէկգի հրեց զանի, և շատ անարգական խօսքեր բաւ անոր, յետոյ անոր մէկ ոտքէն բռնելով քնեց տարաւ հաւնոցին միւս կողմը, որ ոչ թէ հարթ մարդագետնի մը, այլ խորունկ ձորի մը վրայ կը նայէր, և հոն կրնր պատահանէ մը նետեց աղուէսն այն ձորին մէջ, ըսելով. «Կորսուէ, աւազա՛կ: Գիտեմ ինչ պիտի ընէի քեզ, եթէ այս կոտորածէն առաջ ձեռքս իյնայիր:»


Յետոյ տուն գալով գողնոցը կապեց, և սկսաւ լալ: Խեղճ կրնն արդարեւ շատ ցաւալի պաշտօն մը պիտի կատարէր: Գիւրին չէր երթալ պատմել Մարթայի թէ բոլոր հաւերը

սպաննուած էին, քանզի Մարթա այնպէս կը սիրէր հաւերը, որ խենթ կ'ըլլար անոնց վրայ:

Բայց կրնր երբ Մարթային սենեակը պիտի մտնէր, դուրսը աքաղաղի մը ձայնը լսելով քիչ մը մխիթարուեցաւ: Աքաղաղին փախչելով ազատիլը մեծ մխիթարութիւն մը չէր: Բայց երբ կրնր ծառերուն մէջ զգուշութեամբ նայելով աքաղաղին քով երկու երեք հաւ ալ տեսաւ, աւելի մխիթարուեցաւ:

Հապա չարագործը, ի՞նչ կզած էր: Քիչ մը ետքը խոհարարը պատուհանէն նայելով տեսաւ որ աղուէսը վարը ողջ առողջ կը պտտէր, որպէս թէ բան մը պատահած չէր անոր:

Աղուէսն հոս ալ իր խորամանկութիւնը յայտնեց:



ՃԱՐՈՆՅԻ ՈՍՏԱՅՆԱՆԿՆԵՐ

Վերի պատկերին մէջ կը տեսնուին ճարոնցի ոստայնանկներ որ ոստայն կը գործեն: Այս ոստայնանկներուն գործարանին վրան բաց կ'երեւի: Ճարոնցուց տունները փախածներով ծածկուած են, և երբ կ'ուզեն, կրնան այն փախածները մէկգի գնիլ:

Ճարոնի մէջ փողոցներէն անցնող մարդ մը շատ անգամ տուններուն ներսի գիւրի կը տեսնէ. ինչպէս վերի պատկերին մէջ կը տեսնուի այն տանները սը ուր ոստայնանկները կը գործեն:

ՅԻՄՈՒՍ ԻՆՉՊԵՂԱՎ ԿՈՒ ԳԱՅ

Վայմարի մէջ գիշերօթիկ դպրոցի մը աշակերտներն իրիկուն մը սեղան նստած էին, և անոնցմէ մին կ'ազօթէր ըսելով. «Տէր Յիսուս, եկու, մեզի հետ եղիր, և օրհնէ այս սեղանը զոր պատրաստեցիր մեզի համար»: Աղօթքէն ետքը փոքր տղայ մը բաւ:

«Մենք ամէն օր կ'աղօթենք որ Յիսուս հոս գայ, բայց չի գար. ինչո՞ւ համար Յիսուս հոս չի գար:» Վարժապետն այսպէս պատասխանեց անոր. «Տղաս, դուն հաւատա միայն, և վստահ եղիր որ Յիսուս հոս պիտի գայ. ան չի մերժեր մեր աղօթքը»: Տղան, «Ուրեմն, երթամ Յիսուսի համար աթոռ մը պատրաստեմ» ըսելով դուրս ելաւ: Այն միջոցին դուռը զարնուեցաւ, և աղքատ տղայ մը ցուրտէն գողալով ներս մտաւ և խնդրեց գիշերը հոն անցնել: Տղայք ան միջապէս նստեցուցին զանի աթոռին վրայ, զոր բերած էր վերոյիշեալ տղան, և իւրաքանչիւր աղայ կ'ուզէր այն աղքատ տղուն տալ իր կերակուրը: Տղայոց մէկն ալ շատ կը ցաւէր որ իր անկողինը փոքր ըլլալուն համար անյարմար էր նորեկ հիւրին: Վերո-

յիշեալ տղայն այս միջոցին խորունկ մտածելէ ետքը ըսաւ. «Յիսուս չեկաւ, բայց իրեն տեղ այս աղքատ տղան զրկեց, այնպէս չէ՞»: «Այո, տղաս», պատասխանեց վարժապետը, «Յիսուսի անուամբ, աղքատաց և հիւանդաց արուած հացի ամէն պատասա և ջրոյ ամէն կաթիլ նոյն իսկ Յիսուսի արուած կը համարուի, վասնզի Յիսուս պիտի ըսէ. «Որովհետեւ աս իմ եղբայրներուս պինտ պզտիկներէն մէկուն ըրիք, ինձի ըրիք:»

«ԿԱՐԴԱՍ ԱՇԽԱՍԷ»

Երբեմն փոքր տղայք եւ աղջկունք շատ հարցումներով կը նեղեն իրենց մայրերը որ գործով մը զբաղեալ են: Ժամանակաւ փոքր տղոց մը սովոր էր շատ հարցումներ ընել իր մորը: Գիտե՞ք, այս տղուն մայրն ինչ պատասխան կու տար անոր: Ամէն անգամ որ տղան հարցում մը կ'ընէր, մայրը կ'ը-

սէր, «կարգաւ, պիտի սորվիս» Եւ որպէս զի աղան կարենար սորվիլ և զիսնալ ինչ որ գիտնալ կ'ուզէր, գիրքեր կու տար անոր : Այս փոքր տղան ուրիշ անդամներ կ'ուզէր դժուարին գործեր ընել, և մայրը փոխանակ վճատեցուցիչ խօսքեր ընելու անոր, աս մէկ բառը կ'ըսէր, «Աշխատէ» : Այս փոքր տղան մեծնալով եղաւ շատ իմաստուն մարդ մը :



ՄՈՂԵՍՆԵՐՈՒ ՎՐԱՅ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

Ափրիկէի մէջ ճամբորդութիւն ընող անձ մը հետեւեալը կը գրէ. «Ափրիկէի մէջ ենք, և օդն այնպէս տաք է որ բաց պատուհաններէն ներսս ստտիկ տաքութենէ ուրիշ բան չմտնէր : Ծաղկունք թառամելով իրենց գլուխները վար կը կախեն, միջատները բղզալով մարդոց ախանջները կը խլայընեն : արեւը կ'այրէ և կը տոչորէ : Մեր ոտքերը այնչափ յոգնած են որ կը ցաւին, փոքր տղայք իրենց մատուրները ծծելով խոր քնոյ մէջ կ'ընկըլմին, և անոնց մերկ ուսերէն վար քրտինքի խոշոր կաթիլներ կը հոսեն : Ծուներն իրենց կարմրացեալ լեզուները բերաններէն դուրս հանելով կը հեւան, արջառք փոխանակ ասդին անդին երթալով գալար խոտ ճարակելու, շուքի մէջ պառկելով կ'որուճան, ոչխարներ որոնց բարդը խուզուած է՝ ցանկերու տակ խոնաւ տեղեր իրարու վրայ կը դիզուին : և շարժելու կարողութիւն չուին :

Անդին տեսանք գեղին կարիճ մը, որ պատի մը վրայէն սողալով կ'երթար, անոր դիմացէն ելաւ մողէս մը, որ կարիճը տեսնելուն պէս, անոր ետեւէն վազել սկսաւ : Մողէսը որ բաւական մտեցաւ կարծին, իր սուր աչուրներն անոր վրայ տնկելով անոր վրայ նետուելու պատրաստուեցաւ, ինչպէս կ'ընէ կատուն երբ մուկ մը կը տեսնէ : կարիճը ոչ այնչափ սուր աչուրներ ունի, և ոչ այնչափ արագաշարժ է, և անհայտ պատճառաւ մողէսն փտահ էր անոր ետեւէն հասնելով զանի բռնելու, ինչպէս արծիւն և ուրբըր դիւրութեամբ կը բռնեն հաւերը : կռիւն երկար շտեկեց, և երբ կարիճը պատէն վար ինկաւ, մողէսն անյայտ եղաւ : Չեմ գիտեր թէ արդեօք գեղթափ փնտուելու զենաց կարծին խայթոյններուն դէմ կը թուի թէ առաջնմէ պատրաստ գեղթափ ունէր իրեն քով, վասնզի ամենէն փոքր միջատներն անոր վրայ կ'ոխտէր են, և երբեմն փախուստի ատեն վախճալով խոյ կուտանք : Ափրիկէցիք մողէսի հաւկիթներէն շատ կը գարշին, և չեն ուզեր դպչիլ այն փոքրիկ և սոսնձի պէս կպչուն հաւկիթներուն վասնզի պիղծ կը համարին զանոնք :

Մողէսն անյայտ եղաւ : Չեմ գիտեր թէ արդեօք մողէսը գեղթափ փնտուելու զենաց կարծին խայթոյններուն դէմ զինքը պահպանելու համար : Բայց ոչ ըրովհետեւ նախայարձակը մողէսն էր, ինձ կը թուի թէ առաջնմէ պատրաստ գեղթափ ունէր իրեն քով, վասնզի ամենէն փոքր միջատներն անգամ գիտեն թէ որչափ վտանգաւոր են իրենց թշնամիները : երբ կարիճը պատէն վար ինկաւ, մեռած երեւեցաւ, բայց մենք աս թունաւոր սողունին մահուան վրայ ապահով ըլլալու համար անոր վրայ կ'ոխտէր զանի ճզմեցիք : Այս դէպքէն կը հասկցուի թէ մողէսներն ալ օգտակար են : Այս փոքր ուղունները, թէ և երկչոտ են և շատ անգամ փոքր շնկոյցէ մը կայծակի պէս կը փախչին, և երբեմն փախուստի ատեն իրենց ագիւն բոլորովին կամ անոր մէկ մասը կը թողուն, բայց և այնպէս բաւական քաջութիւն ունին պատերազմելու թունաւոր սողնոյ մը դէմ որմէ մենք վախճալով խոյ կուտանք : Ափրիկէցիք մողէսի հաւկիթներէն շատ կը գարշին, և չեն ուզեր դպչիլ այն փոքրիկ և սոսնձի պէս կպչուն հաւկիթներուն վասնզի պիղծ կը համարին զանոնք :

ՊԱՐՏԻՉՊԱՆՆԻՆ ՀԱՆՆԵԼՈՒԿԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Պարտիչպանը հետեւեալ կարգով տնկեց ինը ծառք :

| | | |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| × | × | × |
| | 4 | 5 |
| | × | × |
| | 6 | × |
| 7 | 8 | 9 |
| × | × | × |

(Նշաններուն վրայ դրուած թուանշանները պատասխանին բացատրութիւնը հասկնալու կ'օգնեն) :

Ծառերն այսպէս տնկուելով կ'ըլլան տասը կարգ, և իւրաքանչիւր կարգի մէջ երեք ծառ կը դառնուի, ինչպէս պիտի տեսնուի վարը :

| | | | |
|---------|----|----|----|
| 1. կարգ | 1. | 2. | 3. |
| 2. " | 4. | 5. | 6. |
| 3. " | 7. | 8. | 9. |
| 4. " | 2. | 5. | 8. |
| 5. " | 1. | 4. | 8. |
| 6. " | 8. | 6. | 3. |
| 7. " | 2. | 4. | 7. |
| 8. " | 2. | 6. | 9. |
| 9. " | 1. | 5. | 9. |
| 10. " | 3. | 5. | 7. |

ՍՈՒՐԲ ԳԻՐԲ ԿԱՐԻԱՅՈՂ ՓՈՒՔԻԿ ՏՂԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Երկու բանակներ դէմ առ դէմ կեցած էին հովտի մը մէջ, ուր փոսեր փորուած էին : Արեւը ծագելէն առաջ հովտին մէկ կողմէն հեղեղ մը դալով փոսերը լեցուց, և երբ արեւը ծագեցաւ այն ջուրին վրայ, ջուրը արեան պէս կարմիր երեւեցաւ : Միւս կողմի զօրքը զայս տեսնելով կարծեցին թէ թշնամիք գիշեր ատեն շփոթելով զիրար ջարդած էին, և այն կարմուռ թիւնն անոնց արեան կարմրութիւնն էր : Ուստի թշնամոյն աւարն առնելու համար աճապարելով հովտը մտան, բայց թշնամիք դարան գործած ըլլալով, անոնց վրայ յարձակեցան և մեծ ջարդ տուին անոնց :

Յաղթական բանակը փախստական թշնամոյն ետեւէն խնայով անոնց քաղաքները և արտերն ապականեց, ջրհորները քար լեցուց, և անտառները կտրտեց :

Ի՞նչ բանակներ էին ասոնք : Յաղթական բանակը մը ազգին էր, և այս պատմութիւնն ո՛ր կը գտնուի : ԱՆՅԵԱԼ ԱՄՍՈՅ ՀԱՐՅՄԱՆՅ ՊԱՏԱՍԽԱՆ Եղիսէի գերեզմանը դրին : Մովաբացոց խումբն էր :

Յասկոտ ազգի մը իբր թէ անսանձ ձիու մը մը վրայ հեծած է : Չին տղան առնելով կը տանի ուր որ կ'ուզէ : կիրքերն աւելի վնաս ըրած են մարդոց քան աշխարհիս բոլոր թունաւոր առնկները : Ուստի պէտք է որ աշխատիք ձեր կիրքերը զպղել :

“ՄԵՐ ՏԵՐՈՋԸ ՅԵՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՍԻՐՈՅՆ ՀԱՄԱՐ”
 Ըրէ ամէն բարիք որ կրնաս,
 Ամէն կերպով որ կրնաս,
 Ամէն մարդու որ կրնաս,
 Ամէն տեղ որ կրնաս,
 Ամէն ատեն որ կրնաս,
 Որչափ անգամ որ կրնաս :

ԱՒԵՏԱԲԵՐՆԵՐՈՒՆ ԳԻՆԵՐԸ
 Ամական Աւետարեան գինն է փոսթայի ծախքով տարին արծաթ մէծիտիէ կանխիկ, և մէկ թերթը 30 փարա է :
 Ծարաթական Աւետարեան գինն է փոսթայի ծախքով տարին 1 արծաթ մէծիտիէ կանխիկ :

Ամերիկայի միտնոարաց ընկերութեան կողմէն Խմբագիր ձ. Ք. ԿՐԻՆ Ֆիլաճանը կողուելու, Ամերիկան խան
ԿՈՍՏԱՆԳՆՈՒՊՈԼԻՍ
 ՏՊԱՐԱՐՈՒԹԻՒՆ Ա. ՅԱՆՈՐ ՊՅԵՆՅԵԱՆ